

Մամլոյ յայտարարութիւն

Երէկ, մեր ժողովուրդի ապստամբութեան յիշատակն էր Սուրիոյ Արաբական Կոլանին մէջ՝ որ սկսաւ տասնըչորս Փետրուար 1982-ին, որպէս պատասխան գրաման իշխանութիւններուն որոշումին՝ Իսրայէլի օրէնքները պարտադրելու Կոլանի մէջ և պարտադրել Իսրայէլական քաղաքացիութիւնը իրենց վրայ, ըստ Կնէսէտի հաստատած օրէնքին 14/12/1981-ին: Գործադուլէն վեց ամիսներ ետք, մեր ժողովուրդը Կոլանի մէջ յաջողեցաւ ստիպել գրաման իշխանութիւնները ետ կենալ Իսրայէլական քաղաքացիութիւնը բնակչութեան պարտադրելու, արգիլել ստիպողական զինուորագրութիւնը գրաման բանակին մէջ, ազատ արձակել բոլոր Սուրիացի կալանաւորները ու անոնց վերադարձնել իրենց տուները առանց պայմաններու և ցուցադրել Կոլան բարձրունքին անունը Կոլանի քաղաքացիներու անձնաթուղթին մէջ, փոխարէն Իսրայէլի անունին

Այս առթիւ, Ազգային Համակարգող Մարմինը կ'ողջունէ մեր անսասան ժողովուրդը գրաւուած Սուրիոյ Կոլանին մէջ, և կը պահանջէ միջազգային հասարակութիւնը կրել իր պատասխանատուութիւնները և գործադրել ՄԱԿ-ի 1981-ի թուի բանաձեւը թիւ 497-ը, որ կը համարէ թէ՛ Կոլանի կցելու որոշումը չեղեալ և անվաւեր է

Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուական գրասենեակ

15/02/2014